ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ*

ՀՏԴ: 027(479.25)

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԻՍԿՈՒՀԻ

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարան

ORCID: 0009-0005-1779-5860

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանն իր 90-ամյա գործունեության ընթացքում իրականացրել է բազմաթիվ կրթամշակութային ծրագրեր, որոնք նպաստել են գրադարան-ընթերցող կապի ամրապնդմանը, միջազգային նոր հարաբերությունների հաստատմանը և այլն: Սույն հոդվածի նպատակը այդ ծրագրերն ու դրանց արդյունքները ներկայացնելն է:

During its 90 years of activity, the Khnko Aper National Children's Library has implemented many educational and cultural programs that have contributed to strengthening the library-reader chain, establishing new international relations, etc. The purpose of this article is to present these programs and their results.

Բանալի բառեր՝ մանկական գրադարան, մանկապատանեկան ընթերցանության խթանում, միջոցառումներ, միջազգային համագործակցություն:

Ինչպես հղել՝ Ավետիսյան Ի. (2023), Կրթամշակութային ծրագրերը՝ որպես ընթերցանության խթանման միջոց, *Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, *2*(2), 100-111:

How to cite (APA style): Avetisyan I. (2023), Educational Programs as a Tool for Reading Promotion, *Herald of the Armenian Library Association*, *2*(2), 100-111.

---

* *Հոդվածը ներկայացվել է 13.11.2023, գրախոսվել է 12.12.2023, ընդունվել է տպագրության 20.12.2023:*
The article was submitted on 13.11.2023, reviewed on 12.12.2023, accepted for publication on 20.12.2023.

Ներածություն

2023 թ. Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը նշում է իր հիմնադրման 90-ամյակը: Ինը տասնամյակ շարունակ գրադարանն իրականացնում է գրադարանային, տեղեկատվական, մատենագիտական, կրթամշակութային գործունեություն: Ժամանակակից գրադարանային առօրյան հնարավոր չէ պատկերացնել առանց կրթամշակութային ծրագրերի և միջոցառումների: Գրադարանում տարբեր տարիքային խմբերի երեխաների համար իրականացվող բազմաթիվ (այդ թվում՝ հեղինակային) բազմաբովանդակ ծրագրերն ու միջոցառումները միտված են մանուկների և պատանիների գիտելիքի ամրապնդմանն ու գեղագիտական ճաշակի զարգացմանը: Տարեցտարի այդ ծրագրերի աճը նպաստում է մանուկ և պատանի ընթերցողների նոր սերնդի ներգրավմանը գրքի հանրահռչակման և ընթերցանության մշակույթի ձևավորման ու ընթերցասիրության զարգացման մեջ:

Մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթ

Միջոցառումների շարքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում «Մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթը», որը կազմակերպվում է ամեն տարի Հայաստանի գրողների միության հետ համատեղ: Շաբաթն առաջին անգամ անցկացվել է 1943 թ., Մոսկվայում: Այդ ժամանակից սկսած ԽՍՀՄ բոլոր հանրապետություններում, այդ թվում՝ Հայաստանում, նշվում էր այդ կարևոր հանդիսությունը: 1982 թ. Խնկո Ապոր անվան հանրապետական գրադարանը հյուրընկալեց ԽՍՀՄ 15 հանրապետություններից ժամանած մանկագիրներին, հյուրերին, ինչպես նաև՝ գրողների՝ Բուլղարիայից, Չեխոսլովակիայից, Հունգարիայից: Արդեն ավանդական դարձած «Մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթն» անցկացվում է մարտ ամսվա վերջերին: 2023թ. լրացավ «Մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթի» 80-ամյակը: Կազմակերպված միջոցառումներում կարևորվեց երեխաների կյանքում գրքի և

ընթերցանության դերը. «Ընթերցողական համաժողով–հանդիպումը», գրական և երաժշտական բազմաբովանդակ միջոցառումները երեխաներին հնարավորություն ընձեռեցին շփվել և հաղորդակցվել գրողների հետ, տեղեկություն ստանալ նոր գրքերի մասին և ընդլայնել իրենց գիտելիքները: Շաբաթվա միջոցառումները միտված են ընթերցանության խթանմանը, գրող-ընթերցող-գրադարան կապի ամրապնդմանը[1]:

Ազգային գրադարանային շաբաթ

«Ազգային գրադարանային շաբաթ» Հայաստանում առաջին անգամ անցկացվել է 2002 թ.՝ «Հայկական գրադարանային ասոցիացիայի» նախաձեռնությամբ: Այն մինչ օրս իր ուրույն տեղն ունի գրադարանային կյանքում: «Ազգային գրադարանային շաբաթը» պատեհ առիթ է կարևորելու «գրադարանային աշխատողին» հանրային կյանքում և արժևորելու «գրադարանի» դերը՝ իբրև հանրային պատասխանատվություն կրող մշակութային, գիտական, տեղեկատվական, ժամանցային կազմակերպություն: Այս համատեքստում մեծ է «Ազգային գրադարանային շաբաթի» նշանակությունը մշակութային կյանքի համաչափ զարգացման գործում, քանի որ գրքի նկատմամբ սերն ու հոգատարությունը, ընթերցասիրությունը մեծ դերակատարություն ունեն հոգևոր և մշակութային դաստիարակության մեջ: «Ազգային գրադարանային շաբաթվա» ընթացքում կազմակերպվող միջոցառումները նպաստում են հանրության մեջ գրադարանների, գրքի և ընթերցանության նկատմամբ հետաքրքրության աճին, գրադարանների դերի կարևորմանը և ընթերցող-գրադարան կապի սերտացմանը: Շաբաթը ընթերցողների համար հնարավորություն է մասնակիցը դառնալու մշակութային բազմազան միջոցառումների. այդ օրերին կազմակերպվում են մանկապատանեկան և դպրոցական գրադարանների արդի խնդիրների վերաբերյալ քննարկումներ,

[1] Մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթ https://shorturl.at/djlzQ (10.11.2023)

գրադարանային աշխատողների փորձի փոխանակումներ, մանկական գրքի ցուցահանդեսներ, խմբային երաժշտական ունկնդրումներ, տիկնիկային ներկայացումներ, հեքիաթապատումներ, ինտերակտիվ խաղ-մրցույթներ, մշակութային գործիչների հետ հանդիպումներ, այցելություններ մարզային և համայնքային գրադարաններ: «Ազգային գրադարանային շաբաթվան» մշտապես իրենց բազմաբովանդակ միջոցառումներով մասնակցում են Հայաստանի գրեթե բոլոր գրադարանները:

Մանկապատանեկան գրքի երևանյան ցուցահանդես-տոնավաճառ

Գրադարանում արդեն ավանդական է դարձել Մանկապատանեկան գրքի ցուցահանդես-տոնավաճառը, որն իր շուրջն է համախմբում բազմաթիվ գրքասերների, ընթերցողների, գրադարանի բարեկամների: Տոնավաճառին մասնակցում են հայաստանյան մի շարք գրահրատարակչություններ, գրքին և ընթերցանությանը առնչվող կազմակերպություններ, որոնք ներկայացնում են իրենց մանկապատանեկան արտադրանքը: Միջոցառումներն իրականացվում են գրադարանի ճեմասրահում, դահլիճում և սրահներում: Գրքի ցուցահանդես–տոնավաճառը կարևոր հարթակ է, որտեղ երեխաներն ու այցելուները հնարավորություն ունեն ծանոթանալու տարբեր հրատարակչությունների գրքային հավաքածուներին, նոր հեղինակների ստեղծագործություններին, ձեռք բերելու նոր գրքեր և մասնակցելու բազմաբնույթ ու հետաքրքիր միջոցառումների: Գրադարան այցելող տարբեր տարիքային խմբերի մանուկների և պատանիների համար ցուցահանդես-տոնավաճառի ընթացքում կազմակերպվում են գրքի քննարկումներ, շնորհանդեսներ, հանդիպումներ, վիկտորինաներ, համազրույցներ, գրքերի տեսություններ, զբոսարշավներ, կինոդիտումներ և այլն, ինչպես նաև՝ գրքի նվիրատվությունների ավանդական ակցիաներ: Կարևոր այս միջոցառումները մեկ անգամ ևս նշանավորում են գիրն ու գիրքը, գրականությունն ու գրքարվեստը, մա-

նուկներին և պատանիներին տեղեկացնում են մանկապատանեկան գրքի նորույթներին, խթանում են ընթերցանությունն ու ընթերցասիրությունը, նպաստում մանուկների և պատանիների կրթությանն ու գիտելիքի ձեռքբերմանը:

Գիրք նվիրելու օր

ՀՀ կառավարության որոշմամբ 2008 թվականից յուրաքանչյուր տարի փետրվարի 19-ին՝ հայ մեծ բանաստեղծ Հովի. Թումանյանի ծննդյան օրը, Հայաստանում նշվում է Գիրք նվիրելու օրը: Օրվա խորհուրդը բազմազան է. արժևորվում է գիրքը, կարևորվում է գիրք նվիրելը և գրքի դերը մարդու կյանքում՝ խթանելով գրքի և ընթերցանության տարածումը: Գրադարանում միմյանց գրքեր նվիրում են ո՛չ միայն երեխաները, այլև՝ գրադարանավարները. իրականացվում է «Քո առաջին գիրքը» ակցիան, որի ընթացքում մի շարք բժշկական կենտրոններում գրքեր են նվիրվում նորածինների մայրերին: Օրվա խորհրդին համահունչ՝ նախատեսվում են հեքիաթապատումներ, թատերական և տիկնիկային ներկայացումներ, համազրույցներ, մուլտֆիլմերի դիտումներ, գրական վիկտորինաներ և խաղեր, երաժշտական ունկնդրումներ՝ թումանյանական մոտիվներով:

Մայրենի լեզվի միջազգային օր

Փետրվարի 21-ը Մայրենի լեզվի միջազգային օրն է, որը 2000 թ. ընդունել է ՅՈՒՆԵՍԿՕ-ն՝ որպես մայրենի լեզուների իրավունքի ճանաչման և գործածության աջակցության օր: Այն Հայաստանի Հանրապետությունում նշվում է 2005 թվականից: Աշխարհի հնագույն լեզուներից մեկը՝ հայերենը, հայ ժողովրդի մեծագույն հարստությունն է, նրա մտածողության և հոգու արգասիքն ու արտացոլանքը: Գրադարանում կազմակերպվող ամենատարբեր միջոցառումները՝ համազրույցները, ցուցահանդեսները, գրական վիկտորինաները և խաղերը, ընթերցողական համաժողովները միտված են մայրենի լեզվի և նրա անաղարտության պահպանմանը, գրագետ և գեղեցիկ խոսքի արվեստին և հռետորաբանությանը:

Մանկական գրքի միջազգային օր

Ամեն տարի ապրիլի 2-ին՝ մեծ հեքիաթագիր Հ. Ք. Անդերսենի ծննդյան օրը, աշխարհը նշում է Մանկական գրքի միջազգային օրը: Այն 1967 թ. հիմնադրվել է Մանկական գրքի միջազգային խորհրդի («IBBY») որոշմամբ ու նախաձեռնությամբ: Նպատակ ունի ուշադրություն դարձնելու մանկական գրականության հասանելիությանը և մանկական ընթերցանության տարածմանը: Օրը հագեցած է ոչ միայն Հ. Ք. Անդերսենի, այլև շատ հեքիաթագիրների հեքիաթներով, զրույցներով, թատերական և տիկնիկային ներկայացումներով, վիկտորինաներով, որին մասնակցում են գրադարանի թատերական ստուդիայի սաները, ինչպես նաև՝ գրադարանի ընթերցողները: Ծրագիրը նպաստում է կրտսեր և միջին տարիքի դպրոցականների ծանոթացմանը հայ և աշխարհի ժողովուրդների մանկական գրականությանը, հեքիաթներին ու պատմվածքներին:

Երեխաների պաշտպանության միջազգային օր

Ամեն տարի, սկսած 1950 թվականից, աշխարհում հունիսի 1-ին նշվում է Երեխաների պաշտպանության միջազգային օրը: Այն կոչված է մարդկանց ուշադրությունը հրավիրելու այն խնդիրներին, որոնց բախվում են մոլորակի երեխաները: Օրը հիշեցնում է մարդկանց, որ երեխաները ամենօրյա ուշադրության, սիրո և պաշտպանության, երջանիկ մանկության պահանջ ունեն: Եվ գրադարանում կազմակերպվող միջոցառումները մեկ հավաքական նպատակ ունեն՝ մանուկների մեջ զարգացնել իրենց իրավունքները պաշտպանելու, առողջ և երջանիկ ապրելու բարոյական ձգտումներ: Այդ օրը գրադարանում թևածում է մանկան ուրախ երգն ու պարը, ինչպես նաև՝ կազմակերպվում են թատերական, տիկնիկային ներկայացումներ, բարձրաձայն ընթերցանություններ, գեղարվեստական խմբերի ելույթներ, իսկ գրադարանամերձ հրապարակում՝ կավճանկարչու-

թյուն, որոնց մասնակցում են նաև առողջական խնդիրներ ունեցող՝ խոցելի և ներառական խմբերում ընդգրկված երեխաները:

Արևմտահայոց գրականության միամսյակ

Արևմտահայերենը 2010 թ. փետրվարից ներառվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Աշխարհի վտանգված լեզուների էլեկտրոնային քարտեզում»՝ ստանալով հաստատապես վտանգված լեզվի կարգավիճակ: Այն վերակենդանացնելու և նրա կենսունակությունը պահպանելու համար ամեն տարի գրադարանում անցկացվում է «Արևմտահայոց գրականության միամսյակ», որի ընթացում երեխաները ծանոթանում են արևմտահայ գրականությանը և գրողների ստեղծագործություններին: Կազմակերպվում են բազմաթիվ միջոցառումներ՝ ցուցահանդեսներ, բանաստեղծությունների ընթերցումներ, գրական երեկոներ, ցուցադրվում են արևմտահայերեն լեզվով ֆիլմեր ու մուլտֆիլմեր, գրքերի քննարկումներ: Գրադարանում մեկ ամիս շարունակ թևածում է արևմտահայերենը՝ արևմտահայոց հեքիաթներն ու գրական գոհարները:

Միջոցառումների նպատակն է առավել մեծ ուշադրություն դարձնել արևմտահայ գրականության և լեզվի տարածմանը, հանրահռչակմանը, հաղորդակցությանը, առավել ճանաչելի դարձնել արևմտահայերեն լեզուն ընթերցողների, մանուկների և պատանիների շրջանում:

Եվրոպական ժառանգության օրեր

1954 թ. Փարիզում ընդունված «Եվրոպական մշակութային կոնվենցիան» վավերացրած 50 պետություններում ամեն տարի անցկացվում է «Եվրոպական ժառանգության օրեր» միջոցառումը: Այս ծրագիրը պաշտոնապես հաստատվել է Եվրոպայի Խորհրդի կողմից 1991 թ., որին 2000 թ. միացել է նաև Հայաստանը: Գրադարանում ամեն տարի իրականացվող միջոցառումների (ցերեկույթներ, հեքիաթապատումներ, տիկնիկային ներկայացումներ, բարձրաձայն ընթերցանություններ, երաժշտական խմբային ունկնդրումներ) նպատակն

է երեխաների մոտ զարգացնել ժողովուրդների միջև փոխըմբռնումը և հարգանքը միմյանց մշակույթի և մշակութային բազմազանության նկատմամբ, հարգանք տածելով միմյանց ընդհանուր հիմնական արժեքների նկատմամբ՝ աջակցել համաեվրոպական մշակութային ժառանգության մեջ ազգային ներդրմանը, նպաստել միմյանց լեզուների, պատմության և քաղաքակրթության ուսումնասիրմանը:

Ֆրանկոֆոնիայի օրեր

Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությունը հիմնադրվել է 1970 թ.՝ ֆրանսիական համընդհանուր արժեքների ամրագրման և տարածման նպատակով:

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանն ամեն տարի մասնակցում է Հայաստանում Ֆրանկոֆոնիայի միջազգային օրվա առթիվ անցկացվող մշակութային միջոցառումներին: Ֆրանկոֆոնիայի օրերը գրադարանում բազմաբովանդակ և հետաքրքիր են: Կազմակերպվող հեքիաթապատումները, գրական և երաժշտական ցերեկույթները, ֆրանսերեն լեզվով բարձրաձայն ընթերցանությունները, երաժշտական խմբային ունկնդրումները, ցուցահանդեսներն ու տիկնիկային ներկայացումները նպաստում են ֆրանսիական մշակույթի հետ հաղորդակցմանը, աջակցում են Հայաստանի Հանրապետությունում ֆրանսերեն լեզվի և ֆրանսիական մշակույթի տարածմանն ու ամրապնդմանը:

Բալասան

2019 թ. Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը, ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ, նախաձեռնեց «Բալասան» հեղինակային ծրագիրը: Ծրագրի շրջանակում Սյունիքի մարզի Գորիս քաղաքի բժշկական կենտրոնում բացվեց «Բալասան» մանկապատանեկան ընթերցանության և մտավոր ժամանցի անկյունը: Ծրագրի նպատակն է նպաստել երեխաների հոգեկան առողջությանը և ապահովել նրանց արդյունավետ զբաղվածությունը ստացիոնար բուժման ընթացքում: Նորաբաց անկյունը համալրվեց մտա-

վոր խաղերով, պատկերազարդ հրատարակություններով: Այցելությունների ընթացքում գրադարանի աշխատողներն իրականացրել են զանազան միջոցառումներ (հեքիաթապատումներ, տիկնիկային բեմադրություններ): Իրականացվել են այցելություններ նաև Հայաստանի «Կարմիր խաչ» ընկերության «Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոն և «Հայրենիքի պաշտպան» վերականգնողական կենտրոն («Զինվորի տուն»)՝ Արցախյան 44-օրյա պատերազմում վիրավորված և այնտեղ բուժվող զինվորներին:

Ծրագրի շրջանակում գրադարանը համագործակցում է նաև հաշմանդամություն ունեցող երեխաների աջակցության «Լուսե» կենտրոնի, Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնի, Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող թիվ 17 հատուկ դպրոցի, Լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի, ՀՀ արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոնի, «Էկո արտթերապիա» կենտրոնի, հանրակրթական դպրոցների ներառական խմբերում ընդգրկված երեխաների հետ՝ նրանց համար կազմակերպելով գրադարանային զբոսարշավներ, զրույցներ, հեքիաթապատումներ, բարձրաձայն ընթերցանություններ, ինտերակտիվ խաղեր, տիկնիկային ներկայացումներ:

Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանում

Գրադարանում իրականացվում է նաև «Մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանում» ծրագիրը, որի շրջանակում անցկացվում են վարպետության դասեր, թեմատիկ քննարկումներ, մշակութային այցելություններ: Գրադարանի ընթերցողներն այցելել են Գյումրու «Եռանկյունի» դարբնոց, կավագործության արհեստանոց, «Միեր Մկրտչյանի», «Ասլամազյան քույրերի» թանգարաններ և շրջագայել քաղաքում: Կազմակերպվել են գորգագործության, տիկնիկագործության, ազգային պարերի վարպետության դասեր:

Ծրագրի նպատակն է մշակութային ոչ նյութական ժառանգության կարևորման և արժեվորման գիտակցության ձևավորումն ու հանրահռչակումը մանուկների ու պատանիների շրջանում:

Դպրոցական ճամբարներ

Գրադարանը 2017 թվականից գարնանը, ամռանը և աշնանը՝ դպրոցականների արձակուրդի օրերին, կազմակերպում է դպրոցական ճամբարներ՝ նպատակ ունենալով առավել հետաքրքիր դարձնել երեխաների առօրյան ու ժամանցը: Ճամբար հաճախում են 6-ից 13 տարեկան ոչ միայն հայաստանաբնակ, այլև իրենց հանգիստը Հայաստանում անցկացնող տարբեր երկրներից ժամանած երեխաները: Ճամբարի աշխատանքներին անվճար հիմունքներով մասնակցում են նաև խոցելի խմբերի երեխաները: Երեխաների համար կազմակերպվում են բազմաթիվ կրթամշակութային ծրագրեր, այցելություններ թանգարաններ, թատրոններ և այլ մշակութային կենտրոններ: Ժամանցային բնույթի հետաքրքիր դասընթացները և վարպետության դասերը, ուսուցողական, կրթական և մշակութային պարապմունքները, գրադարանային զբոսարշավները, կինոդիտումները հնարավորություն են տալիս երեխաներին ձեռք բերելու նոր գիտելիքներ և հմտություններ:

Քո մասնագիտությունը

Մասնագիտական կողմնորոշումը և մասնագիտության ընտրությունը պատանիների կյանքում կարևոր և պատասխանատու քայլ է: Կատարել ընտրություն՝ նշանակում է ընտրել մասնագիտություն, որն առավելագույնս համապատասխանում է քո ընդունակություններին, հետաքրքրություններին ու անձնական նախասիրություններին: Այս դեպքում շատ կարևոր է նաև պատանիների շրջանում մասնագիտությունների և զբաղվածության վերաբերյալ տեղեկատվության տարածումը, որի համար նախատեսվում են հանդիպումներ տարբեր մասնագիտություններ ունեցող մարդկանց հետ: Կազմակերպվել են հիշարժան հանդիպումներ՝ բժիշկ, համաճարակաբան

Արման Բաղալյանի, քանդակագործ Վիգեն Ավետիսի, գյուղատնտես Նվարդ Շահմուրադյանի, մեղվաբույծ Մարիաննա Ավետիսյանի և այլ անձանց՝ գրողների, հոգեբանների, գրահրատարակիչների հետ: Կազմակերպվում են նաև ցուցահանդեսներ, զրույցներ, վիկտորինաներ, որոնց նպատակն է պատանիների մեջ ձևավորել պատասխանատվություն և պարտավորվածության զգացում, ինքնուրույն որոշում ընդունելու և մասնագիտական ընտրություն կատարելու ունակություն. միջոցառումներ, որոնք կաջակցեն նրանց կողմնորոշվել իրենց նախընտրած մասնագիտության մեջ և մասնագիտական ճիշտ ընտրություն կատարել:

Հեքիաթի դեսպաններ

Հեքիաթի սրահում գրադարանի հեքիաթասացներն ամեն օր պատմում են հեքիաթներ փոքրիկ այցելուների համար: Գրադարանի նախաձեռնությամբ 2010 թվականին Հայաստանում առաջին անգամ իրականացվեց հեղինակային ծրագիր, որ կրում էր «Հեքիաթի դեսպաններ» խորագիրը: Հեքիաթները կարդում են ՀՀ-ում հավատարմագրված երկրների դեսպանները՝ իրենց մայրենի լեզվով, ինչպես նաև՝ հայ անվանի մտավորականներ և արվեստագետներ:

Այս ծրագրի նպատակն է ստեղծել միջմշակութային կապեր, մանուկ և պատանի ընթերցողին ծանոթացնել տարբեր երկրների մանկագիրների և գրողների ստեղծագործություններին, այդ երկրների կենցաղին և մշակույթին, բարելավել ու զարգացնել օտար լեզուների իմացությունը հանդիպումների և քննարկումների միջոցով:

Բարբառագիտություն

Բարբառները հայերեն լեզվի հիմքն են, նրա հարստությունը, մեր պատմության, մեր հիշողության գանձարանը: Այս ծրագրի շրջանակում հայոց լեզվի տարբեր բարբառներով իրականացվում են հեքիաթների պատումներ և բարձրաձայն ընթերցանություն, որով նոր սերնդի համար հասանելի և ըմբռնելի են դառնում հայերեն լեզվի բարբառային առանձնահատկությունները:

Ծրագրի նպատակն է մանուկներին և պատանիներին ծանոթացնել հայերեն լեզվի բարբառներին, նրանց համար բանահյուսության և գրականության միջոցով հասանելի դարձնել հայերեն բարբառները և հետաքրքրություն առաջացնել դրանց նկատմամբ:

Ամփոփում

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանում յուրաքանչյուր տարի իրականացվում է մոտավորապես 200 կրթամշակութային ծրագիր և միջոցառում, որոնք բազմապիսի և բազմաբովանդակ են: Սակայն մեկն է բոլոր ծրագրերի և միջոցառումների նպատակը՝ խթանել ընթերցանությունն ու ընթերցասիրությունը մանուկների և պատանիների շրջանում՝ նպաստելով նրանց բազմակողմանի զարգացմանն ու գիտելիքի ձեռքբերմանը:

EDUCATIONAL PROGRAMS AS A TOOL FOR READING PROMOTION

ISKUHI AVETISYAN

Khnko Aper National Children's Library

Keywords: Children's Library, International Cooperation, Promotion of Children's and Youth Reading, Events.

In the Khnko Aper National Children's Library more than 200 educational and cultural programs and events are implemented every year, which are diverse and multi-faceted. However, the goal of all programs and events is to promote reading among children and teenagers, contributing to their multifaceted development and acquisition of knowledge.